# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 21-Ն

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

**1.**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2009թ. մարտի 20-ի «Դատական ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը հաստատելու մասին» թիվ 03-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5.1-ին կետ՝

| | | |
|---|---|---|
| Համակարգչային սպասարկման ծառայության պետ | 1 | գլխավոր 2-րդ |

**2)**11-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.

**3)**14-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 14.1-ին կետ՝

| | | |
|---|---|---|
| Համակարգչային սպասարկման ծառայության կրտսեր մասնագետ | 1 | կրտսեր 1-ին |

**4)** «Ընդամենը» տողի «Հաստիքների քանակը» սյունակի «75» թիվը փոխարինել «76» թվով:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

22 դեկտեմբերի 2014թ.
ք. Ստեփանակերտ